



«ՓՈՂ ՏՈՒՒՄ ԿԱՆՈՒՄ ԵՎ ԵՆՈՒՄ ԳԱՆ» ՂԱԿ ԺԸ 16.

ՀԱՏՈՐ ԼԵՒ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈՒԼԻՍ, ԱՊՐԻԼ 1, 1906

ԹԻՒ 4

ՍԵՆՑ ԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԲՈՒԹԵՒԹԻ ՄԵՋ

Քանառայի փոխադրուած Գաղղիացի գաղթականներ բնակեցան և Գաղղիոյ կառավարութեան ստացուածքն եղաւ անիկա մինչև որ Անգղիացիք առին զայն ասկէ 147 տարի առաջ յուսահատական ճակատամարտէ մը ետքը, որուն մէջ երկու կողմերու հրամանատարներն ալ սպաննուեցան: Այդ ժամանակէն ի վեր Գաղղիա երկիր չունի Հիւսիսային Ամերիկայի մէջ, բայց Գաղղիացի գաղթականները հոն մնացին, և անոնց սերունդները հիմա Քանառայի այդ մասին բնակիչներուն մեծամասնութիւնը կը կազմեն: Հոն ամէնէն աւելի շատ խօսուած լեզուն Գաղղիերէնն է: Գաղղիացի Քանառացիները շատ ջերմեւանդ կաթողիկէներ են, և երբեք համակիր չեն Գաղղիոյ կառավարութեան և Գաղղիոյ ժողովրդին մեծ մասին եկեղեցւոյ հանդէպ բռնած ընթացքին: Քանառայի այժմու նախարարապետը Գաղղիացի սերունդէն կաթողիկէն է, բայց Բրիտանական արքունիքին ջերմապէս անձնուէր է:


Այս պատկերը փոխադրուած է Սենց Ան Տը Պոփրէ եկեղեցիին ներսի կողմը կը ցուցնէ: Սենց Ան (Սր. Աննա) Գաղղիոյ Պրիթանի գաւառին պաշտպան սուրբն է: Երբ 150 տարի առաջ Պրիթանիէ եկող գաղթականներով լեցուն փոքր նաւ մը ընկղմելու մտ էր Սր. Լաւրենտիոս գետին մէջ, անոնք իրենց պաշտպան սուրբին արթեցին, և այնպէս հաւատացին թէ ան էր զիրենք ազատողը: Փայտէ փոքր մատուռ մը կանգնեցին ի պատիւ անոր, որուն տեղը շինուած է հիմա այս գեղեցիկ եկեղեցին: Այս պատկերը կը դնենք իբրև եկեղեցւոյ ճարտարապետու-

թեան օրինակ միայն, և ոչ թէ անոր համար որ այս մասնաւոր եկեղեցիին վրայ համարում ունինք: Անտարակոյս կարելի է որ եկեղեցի մը շատ հոյակապ շէնք մը կանգնէ: Բայց եթէ իր բոլոր ստակը կը դնէ մեծածախ շէնքի մը մէջ, և բան մը չունի աղքատներուն համար, բան մը չունի աւելի տկար եկեղեցիներու տալու, բան

ճանը մէջ՝ որ անոնց ամէնուն Ստեղծիչն է և մարդոց աչառութիւն չունեներ:

ԲԱՒԱԿԱՆ ԳԻՏՆԱԼ
(ԵՆԿ ՓԵՒԷԼ՝ ՈՒԷԻԷ)

Երանի՛ թէ կարենայի մեր փոքրիկ ընթերցողներուն մէջ տպաւորել թէ



մը չունի Աւետարանը կառուարտներուն զրկելու, կը սխալի: Բայց Հրէական տաճարը այնքան գեղեցիկ շինուեցաւ որքան կրնար շինել Սողոմոն թագաւորը, և այն՝ Աստուծոյ հաւանութեամբ: Մենք ալ գեղեցիկ շինենք մեր երկրպագութեան տուները, եթէ կրնանք, միայն թէ նայինք որ եկեղեցիին մէջ թէ՛ հարուստը թէ՛ աղքատը հաւասար նկատուին, վասն զի անոնք կը գտնուին այն Աստուծոյն

աղէկ դաստիարակութիւնը իր հաւասարը չունի: Տասնհինգ տարեկան տղայ մը որ հասարակ դպրոցէ մը նոր ընթացաւարտ եղած էր, ինձի եկաւ օր մը և ըսաւ. «Չեր վաճառատան մէջ կրնա՞ք պաշտօն մը տալ ինձի: Ես հիմա չեմ ուզեր ալ դպրոց երթալ»: «Դպրոց երթալը կը թողո՞ւս այս տարիքիդ մէջ», ըսի: «Այո, տէր», պատասխանեց տղան, «ես ձանձրացած եմ դպրոցէ և հիմա կ'ուզեմ ստակ

շահիլ: Ինձ մէ աւելի մեծ չեղող շատ տղաք շարաթը հինգ վեց մէճիտ կը շահին: "Իրօք հարկը քեզ կը ստիպէ որ դպրոցը թողուս:" "Ո՛յ, ես կրնամ բարձր դպրոց երթալ, և ունիմ հօրեղբայր մը, որ կ'ըսէ թէ ինձի պիտի օգնէ անկէ ետե գոյէճ մտնելու: Բայց ես դպրոց երթալ չեմ ուզեր և կ'ուզեմ ստակ շահելու գործ մը ընել:"

Այնուհետև այդ տղուն հետ աղէկ խօսակցութիւն մը ունեցայ, և ինչ որ անոր ըսի, կը յարմարի ամէն տղուն որ դպրոցը թողուլ կ'ուզէ լոկ այն պատճառաւ որ դպրոց չսիրեր կամ ստակ շահիլ կ'ուզէ: Այս տղան, շատ ուրիշներու պէս, կը խորհէր թէ հիմա բաւական բան գիտէ, և ինձի կը յիշեցնէ նշանաւոր հեղինակի մը խօսքը, թէ «Այն տղան որ դպրոցը կը թողուիր թէ շատ գիտնալուն համար, բայց մանաւանդ կարդալը ստեղծուն համար, շուտով պիտի մոռնայ իր բոլոր սորվածը. մինչ ուրիշ մը որ գիտութեան ծարաւ է, եթէ մինչև իսկ քիչ ալ սորված ըլլայ, միւսէն աւելի պիտի սորվի և իր արդէն գիտցածին վրայ գիտութիւն պիտի աւելցնէ:"

Ես միշտ կը ցաւիմ այն տղոց վրայ որոնք «բաւական գիտեն» իրենց տասներհինգ տասներվեց տարեկան եղած ատենը: Անշուշտ պիտի գայ ժամանակ, երբ իրենց ունեցած տգիտութիւնը իրենց պիտի յայտնուի և զիրենք պիտի խոնարհեցնէ: Տասներվեց և մինչև իսկ տասներինը տարեկան տղայ մը ճիշդ ուսանիլ սկսելու հասակին մէջ է: Անիկա տակաւին հազիւ իրական գիտութեան հիմը դրած է. և երբ կը խօսի իր «բաւական գիտնալուն» վրայ, իր տգիտութիւնը կը յայտնէ: Ամէն ինչ որ երկրիս ամէնէն իմաստուն մարդիկ գիտեն, չնչին բան մըն է իրենց չգիտցածներուն բաղդատմամբ: Կրնայ ճշմարիտ ըլլալ թէ դուն ուսանիլ չես ուզեր, բայց պէտք է գիտնաս, տղաս, թէ կեանքը պարտականութիւններով լեցուն է, զորոնք թերևս չուզես կատարել, բայց պէտք է կատարել: Նաև քեզի համար անտարակոյս կարելի է ուսմունքը սիրել սորվիլ: Եւ այն ատեն պիտի հասկնաս դաստիարակութեան անհուն պատուականութիւնը և ճշմարիտ արժէքը:

Եթէ ձեզմէ մէկը կը խորհի դպրոցը թողուլ, լոկ այն պատճառաւ որ ձանձրացած է դպրոցի կեանքէն, կամ կ'ուզէ ստակ վաստկիլ, կ'աղա-

չեմ որ խնդիրը խնամով, աղօթքով նկատողութեան առնէք, քայլ մը առնելէ առաջ որու համար ստուգիլ պիտի զղջաք վերջը, հասկնալով թէ երբ դպրոցը թողուցիք, չէիք գիտեր բաւական բան:

ԹԻՊԷԹ

Թիպէթ աշխարհի առաստաղը կոչուած է, վասն զի շատ բարձր է: Ասիոյ կեդրոնը կը գտնուի, և կը բաղկանայ ծովուն երեսէն 10,000է մինչ 17,600 ոտք բարձրութեամբ սարահարթներէ (եայլա): Պրուսայի մօտ գտնուող Ողիմպոս լեռը ծովուն երեսէն իբր 9,000 ոտք բարձր է, և ուստի այս սարահարթներուն ամէնէն ցածը Ողիմպոսի գագաթէն վեր է, և անոնց ամէնէն բարձրը Արարատի կա-

պիտի անհետանան: Պուտոտայականները այս վիճակը ներվանա կ'անուանեն: Անոնք բան չեն գիտեր մտային և բարոյական գործունէութեան փառաւոր և յաւիտենական կեանքին վրայ, այն սրբութեան կեանքին և այն սիրոյ կեանքին վրայ, զոր Աստուածաշունչը կը յայտնէ:


Թիպէթցիք իրենց երկիրը գոց պահած էին Պուտոտայական չեղողներու առջև մինչև երկու տարի առաջ: Միայն Անգղիացի մը և երկու Գաղղիացիներ եղան այն Եւրոպացիները որ չափ գիտենք, որոնք հասան Ղհասս մայրաքաղաքը, բայց շուտով վտարուեցան: 1904ին Անգղիական պատուիրակութիւն մը յայտնեցաւ յիշեալ մայրաքաղաքը մտնել բաւական կռիւներէ ետքը: Հոս այս պատկերին



տարէն վեր է: Հարկաւ հոն շատ ցուրտ կ'ըլլայ ձմեռը, և ամառուան եղանակը կարճ կը տևէ:

Թիպէթցիք Պուտոտայական են: Անոնք կը հաւատան թէ երբ մարդ մեռնի, անոր հոգին կ'անցնի ուրիշ մարմնի, որ կրնայ մարդու կամ կենդանիի մարմին ըլլալ: Եթէ մարդը չար եղած է, յաջորդ մարմնառութեան ատենը հաւանօրէն անարդ կենդանիի մը պիտի փոխուի իբրև պատիժ: Եւ այսպէս հոգին կ'անցնի մարմնէ մարմին, և մարդ չգիտեր թէ արդէն քանի հարիւր անգամ նոր մարմիններ առած է այսպէս, վասն զի ամէն մէկ փոփոխութեան հետ անցեալը կը մոռցուի: Եւ ինչ է ատենց բոլորին վախճանը: Ինչ է Երաննի թմրութեան և քուն վիճակի մը հասնիլ, ուր փափաք և զգացում

մէջ կը ցուցուին պատուիրակութեան հրամանատարը և իր ներքև գտնուող զօրականները:



ԳԱՂՂԻԱՅԻ ԱՂՔԱՏԻԿ ՀՈՎԻՒՅ ԵՒ ԻՐ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ
Գաղղիոյ գեղերէն մէկուն մէջ կը բնակէր հովիւ մը իր կնոջ և ութ զաւակներուն հետ: Թէև դիւրին չէր իրեն իր պզտիկ վարձքով բաւական ուտելիք և հանդերձ ձեռք բերել տասը հոգիի համար, բայց աշխատած էր նոր Աստուածաշունչ մը գնելու չափ ստակ մէկ կողմ դնել, վասն զի իր հին Աստուածաշունչը գրեթէ մահած էր: Նոր Աստուածաշունչը բռնով իրեն համարնոր ըսել կ'ուզեմ, մարդը որովհետև չէր կրնար բարձր գին վճարել, գործածուած Աստուածաշունչ մը սուսաւ: Բայց գիրքը լաւ վիճակի մէջ

էր և խոշոր, յստակ գիրերով. բան մը որ շատ պէտք էր, վասն զի հովիւրը կը ծերանար:

Աստուածաշունչը լաւ կը գործածէր և երջանիկ շատ իրիկուններ անցուց իր կնոջ եւ զաւակներուն կարողալով Մաղմուսներէն և կամ Հին կամ Նոր Կտակարանի գեղեցիկ պատմութիւններէն:

Իննդեան տունէն շուտ ետքը կիրակի առաւօտ մը երբ կը կարգար Աստուածաշունչը, եկաւ տեղ մը ուր գիրքին երկու թուղթերը իրար փակած էին. գանակ մը առաւ և զանոնք իւրարմէ բաժնեց զգուշութեամբ: Մարդը յանկարծակիի եկաւ գտնելով անոնց մէջտեղը քսան տողաբնոց (չորս Անգղ. ոսկի) թղթադրամ մը: Ապշուած թիւնը մեծ եղաւ, բայց մինչ նստաւ զարմանքով, աչքին դպաւ թղթի կտոր մը որուն վրայ գրուած էր սա խօսքը, «Մտակի այս գումարը մեծ աշխատութեամբ խնայուած է, և որովհետեւ իմ ազգականներս ամէնն ալ հարուստ են և անոր կարօտ չեն, կը թողում զանիկա անոր որ կը կարգայ այս Աստուածաշունչը»:


Հաւանորէն այս հետաքրքրաշարժ կտակը բրած է այնպիսի մէկը որ Աստուծոյ խօսքին մէջ գտած էր իր կեանքին ուրախութիւնը, և զաւակներ չունենալով, ոչ ալ ստակի կարօտ ազգականներ, ուզած է որ իր խնայած այդ դրամը անցնի անանկ մէկու մը ձեռք որ ճշմարտապէս պիտի օգտուի:

Որչափներ ուրախ պիտի ըլլային եթէ ատոր նման գանձ գտնէին իրենց Աստուածաշունչներուն մէջ: Բայց Աստուծոյ խօսքին մէջ աւելի մեծ գանձեր կը գտնուին, գանձեր՝ զորոնք ոչ ցեցը և ոչ ժանգը կրնան ապականել, ոչ ալ գողերը պատ կրնան ծակել ու գողնալ: Զանոնք հոն փնտռեցէք, և անչուտ պիտի գտնէք:

ՄՏԱՅԻ ՓԻՂ ՄԸ

Մտացի ըլլալու կողմանէ նշանաւոր է Կունտա, Հնդիկ փիղը, Նիւ Եորքի «Պրոնք Զու» կենդանաբանական պարտեզին մէջ, երբ այցելուները ստակ տան անոր, գետնէն իր պատիճով կ'առնէ զանիկա, կը վերցնէ ստակի ամանին կափարիչը և ստակը հոն կը ձգէ: Ստակը ձգելէն ետքը միշտ կ'ուզէ ձեռք թոթուել զայն սուտղին

հետ: Վեր կը բռնէ իր առջևի աջ ոտքը մինչև որ այցելուն մէկ երկու անգամ անոր դպչի իր ձեռքով: Այս փիղին ցուցած ամէնէն վերջին զարմանալիքն է փչելու նուագարան չալէլը: Կ'առնէ զայն իր պատիճով և կը փչէ անոր մէջէն: Երբ մանուկներ կ'առնան առած կը պտըտցնէ զբօսավայրին բոլորտիքը և կը հանդիպի գործաւորներէն մէկուն որ ձեռքի սայլ մը կը տանի, միշտ կը կենայ և կ'օգնէ մարդուն սայլ մղելու գործին: Կունտա նաեւ կ'օգնէ իրեն արդու զարդ ընողներուն: Ամէն առաւօտ ծունկի վրայ կու գայ որպէս զի իր կունակը ալուի և, երբ լոգանք տրուի իրեն, ջուրին խողովակը կը բռնէ պատիճովը և ջուր կը ցայտեցնէ իր մարմնին մինչև որ բոլորովին մաքրուի ինք: Այս նշանաւոր կենդանին հիմա տասը տարեկան է, և որովհետեւ փիղերը ի-



րենց կատարեալ մեծութեան չեն հասնիր երեսուն տարեկան ըլլալէ առաջ, թերեւս իր տեսակին մէջ աշխարհիս ամէնէն խոշորը պիտի ըլլայ, վասն զի իր տարիքին նայելով արդէն ամէնէն խոշորն է հիմա Ամերիկա բերուածներուն մէջ: Ամիսը 30 քաշ կ'աւելնայ իր ծանրութիւնը, և ժանիքները այնքան արագ կ'աճին որ փոփոխութիւնը կրնայ տեսնուիլ շաբթէ շաբաթ:

ԴԱՄԱՍԿՈՍ

Դամասկոս թերեւս աշխարհի ամէնէն հին քաղաքն է: Աբրահամ հոսկէ գտաւ իր ծառան Եղիազարը (Ին. Ժե. 2), հոս էր ուր կը բնակէր բորոտ Նէեման, հոս էր ուր հալածիչ Տարսնացի Սաուղ փոխուեցաւ և եղաւ Քրիստոնեայ Եկեղեցւոյ առաքեալ: Կ'ըսուի թէ Պէյրուսէ գէպի Դամասկոս երկաթուղիով ճամբորդութիւնը շատ

հրապուրիչ է: Ճամբորդը նախ իր ետեւը կը տեսնէ Միջերկրականին կապոյտ ջուրերը, որ ժամերով աչքի առջև կը գտնուի: Յետոյ ճամբան կ'որոտի կը դառնայ Լիբանանու գոտիին կիրճերուն մէջէն, և երբ վերջապէս քաղաքին կը մտնայ, կ'անցնի Պարատա գետին (հին Արանան) տես (Գ. Թագ. Բ. 12) քովէն, հոսանք մը յստակ ջուրերով որ կ'իջնայ լեռան կողէն: Հոն կը բաժնուի շատ ջրանցներու երբ քաղաք կը մտնէ, և ջուր կը մատակարարէ բոլոր մեծ տուներու բակերուն մարմարին աղբիւրներուն, նաև կը ջրէ այն շատ մը պարտեզները որոնց ծառերը կը ջրապատեն քաղաքը իբրև գեղեցիկ կանաչ եզերքով: «Ուղիղ» ըսուած փողոցը (Գոր. Թ. 11) տակաւին կը ցուցուի: Քաղաքը կը կորէ արևելքէն արևմուտք, և հիմա կը կոչուի Պազար փողոց: Տունը ուր Պողոս տարուեցաւ իր տեսիլքէն ետեւ, Անանիայի տունը և այն տեղը ուր Պողոս զամբիւղով պարիսպէն վար իջուցուեցաւ, նաև ճիշդ այն տեղը քաղաքին մօտ ուր պայծառ լոյսը փայլատակեց Պողոսի վրայ և Տէրը խօսեցաւ անոր, ամէնն ալ կը ցուցուին: Բայց շատ հաւանական է թէ աւանդութիւնը կը սխալի այդ տեղերու շատին ճշդութեան մասին:

«ՆՈՐ ԶԱՆՔ ՄԸ ԸՐԱՒ»

Անյաջողութիւններու մէջ վճատած էք: Անյաջողութիւնը կը բերէ իմաստութիւն որ կը սորվեցնէ յաղթել: Զախողութիւններու մէջ առանց վնասելու աշխատող մարդը կամ կրնն է որ թէեւ կ'իյնայ բայց նորէն կ'եղլէ, և ան է որ կը յաջողի:

Լսեցէք հետեւեալ պատմութիւնը տղու մը վրայ որ չյաջողեցաւ առաջին անգամուն, բայց այդ անյաջողութիւնը անոր նորէն աշխատելուն և յաջողելուն և քաջալերուելուն պատճառ եղաւ:

Մարդ մը երբ իւրանտայի հիւսիսային մասին մէջ կը ճամբորդէր, տղայոց ձայներ լսեց, կանգ առաւ և մտիկ ըրաւ: Հասկնալով որ այդ ձայնը կու գար պզտիկ չէնքէ մը որ իբրև դպրոց կը գործածուէր, մօտ գնաց: Եւ որովհետեւ դուռը բաց էր, ներս մտաւ և մտիկ ըրաւ տղոց բառեր

հեղեղուն: Պզտիկ տղայ մը մէկ կողմ կայնած էր: «Ինչո՞ւ այդ տղան հող կայնած է», հարցուց մարդը: «Ո՛հ, անպիտանը» պատասխանեց վարժապետը: «Մէջը բան չկայ: Մարդ ըլլալէ չունի: Դպրոցին մէջ ամէնէն բժամիտ տղան է:»

Այցելուն շատ զարմացաւ վարժապետին պատասխանին վրայ: Տեսաւ թէ վարժապետը այնպէս խիստ և բիրտ էր որ աւելի փոքր և աւելի երկչոտ աշակերտները գրեթէ սնքած էին: Անոնց քանի մը խօսք խօսելէն ետքը իր ձեռքը դատ կայնած տղուն դիտուն վրայ դրաւ և ըսաւ անոր, «Դուն կրնաս լաւ ուսանող մը ըլլալ: Մի վճատիր: Աշխատէ, տղաս, աշխատէ:»

Տղուն քաջութիւնն երևան եկաւ: Անոր քնացած միտքը արթնցաւ: Նոր ջանք մը ըրաւ, Այդ ժամէն աշխատեցաւ միւս աշակերտները գերազանցել, և իրօք եղաւ աղէկ ուսանող մը: Այդ տղան էր Ատամ Բլաբը, որ եղաւ Ուէսլեան երեւի Աւետարանի պաշտօնեան և մեկնիչը:

ՓՈՔՐԻԿ ԶՈՒԹԱԿԱՀԱՐՈՂ

Նոյեմբերի կարճ օրն արդէն իրիկուն եղած եւ խաւարը յաջորդած էր: Փողոցին ըյսերը աղօտ կերպով կը պլպլային արագ իջող ձիւնին մէջէն: Փողոցին անկիւնը յանկարծ եւրեցաւ մէկը, որ երբ ելեկորական ըյսի մը ներքեւ եկաւ կեցաւ, անհանար պղծիկ պատանի մըն էր ցնցոտիներ հագած և իր բազուկներուն մէջ ամուր մը սեղմած էր ջուրի մը: Տղուն երեսը վտիտ և դեղնած էր, և անոր խոշոր թուխ աչքերը արցունքով լեցուած էին: Տղան յոգնած ըլլալով՝ ձողին կոթնեցաւ: Այդ օրը ոչ ոք մտիկ ըրած էր անոր ջուրի գարնելը, ուստի տղան իրիկուն ճաշէ ստակ շահած չէր: Այդ պատճառաւ արդէն այդ օրը ոչ նախաճաշ ըրած էր ոչ կէսօրուան ճաշ: Ո՛հ, օդը շատ ցուրտ էր և ինք շատ անօթի էր: Թերևս կրնար պառկիլ հոն ձիւնին վրայ, և թերևս հրեշտակ մը տեսնէր զինք և վեր Դրախտը տանէր: Ի՛նչ էր այն համարը. «Այսուհետև ոչ պիտի անօթեան, ոչ պիտի ծարախն:» Ի՛նչ գեղեցիկ տեղ մը պիտի ըլլայ այն, կը մտածէր թէ կօշիկ ներկող փոքրիկ Բարթիկ հոն է, Բարթիկ աշան սկիզբները մեռած էր: Ո՛րչափ գիշերներ միտսին կերած էին կարկանդակ մը կամ քիչ մը պտուղ, և փայ-

լուն ապագայ մը երազած էին: Ինք մեծ երաժիշտ մը պիտի ըլլար եւ Բարթիկ դրամատէր, և փառաւոր տան մը մէջ պիտի բնակէին: Բարթիկ իր երեւակայած փառաւոր բնակարանէն աւելի փառաւոր բնակարան մը դուռը էր: Բայց ինք հիմա յոգնած, անօթի և փողոցը մնացած խեղճ տղայ մըն էր:

Մինչ տղան հոն կայնած էր դրեթէ թմրած, ճամբուն վրայ ըյս մը ցուրց պատուհանէ մը: Վարագոյրը վեր քաշուած էր, և ինք կրնար տեսնել պերճ սենեակին ներսի կողմը, ուր պատրաստութիւններ կ'ըլլային իրիկուն ճաշէ համար: Այդ փորձիչ սեղանին երեւոյթը նոր ոյժ մը տուաւ տղուն, որ փողոցին միւս կողմը անցաւ, և սկսաւ իր ջուրիկը զարնել: Այդ այդ տան մէջ կը բնակէր շատ իմաստուն, փառասէր և բարձրամիտ օրիորդ մը: Անիկա այդ հոյակապ տան մէջ առանձին կը բնակէր և աղնուական ընտանիքի մը վերջին անդամն էր: Մարդիկ կը զմայլէին անոր վրայ և կը պատկանէին անկէ: Առատաձեռնութեամբ ստակ կու տար բարեսիրական նպատակներու համար, բայց ոչ կ'օգնէր և ոչ կարեկցութիւն կը ցուցնէր անհասանելի: Օրիորդը թէ և կեանքը ցանկալի ընող շատ բաներ կը վայելէր, զուրկ էր սակայն կեանքի մէջ լաւագոյն բանէն: Այս գիշեր նստած էր բաց կրակին առջև սրտում տխուր կը խորհէր թէ այդ ձմեռ դուրս ելթալու էր, տունը անտանելի կերպով տխուր էր: Յանկարծ վերցուց գլուխը զարմանքով: Խաղաղիկ օդին մէջէն ջուրիկ մը ձայն կու գար: Մեղամոզձիկ եղանակները հետզհետէ կը բարձրանային և այնպէս ողբաձայն էին որ խողին աչքերէն արցունք կը վաղցնէին: Աճապարանքով հնչեցուց զանգակը և ծառային հրամայեց որ հասկնայ թէ դուրսը խիստ ցուրտին մէջ նուազարան զարնող մ'իլ է: Շուտ ետ եկաւ ծառան: Բաւ թէ Մուրացկան պատանի մըն է, և թէ կ'ուզէր վառուել զանիկա: «Ներս բեր զանիկա», ըսաւ օրիորդը մարդուն, որ ապչեցաւ մնաց: Տղան ներս մտաւ, իր յոգնած դէմքին վրայ սարսափի նշաններով: Կը մտածէր թէ օրիորդը զինք ոստիկանութեան պիտի յանձնէր:

«Ի՛նչ է անունդ», հարցուց օրիորդը: «Արչամ, Օրիորդ», պատասխանեց տղան կամացուկ մը: «Եղանակ մը չալէ նայի՞նք», ըսաւ օրիորդը, և նստաւ ու տղան դիտեց մեծ ուշադրութեամբ: Տղան չալեց պարզ եղանակ մը, բայց օրիորդը մինչ զանիկա կը դիտէր, միտքը բաներ ինկան եւ զրգուցեցին խորհուրդները: Շատ երկար ժամանակ առաջ, եղբայր մը ու-

նէր օրիորդը ճիշդ այս աչքերով: Զանիկա շատ կը սիրէր, և սաստիկ լացած էր երբ անիկա առնուեցաւ իրմէ: Ո՛հ, Ստեփանիկը ի՛նչ պիտի ըլլար եթէ այդպէս ցուրտը մնար: Արթնցան իր այն հին փափուկ գգաւ ցուցները որոնք այնքան ատեններ զսպուած էին: «Կեցիր», ըսաւ օրիորդը, և տղան իրեն քով կանչելով անոր փոքրիկ ցուրտ ձեռքերը իր տաք ձեռքերուն մէջ առաւ, և ըսաւ մեղմով. «Արչամ, դուն զարմանալի տաղանդ մը ունիս: Հիմա կ'ուզեմ որ պատմես ինձի քու վրայովդ ամէն բան:» Արչամ հանդարտութեամբ պատմեց աղքատութեան երեսէն իր հօր կրած նեղութիւնները, թէ անիկա երաժշտութեան ուսուցիչ էր, թէ գարունին մեռած էր ինչպէս արդէն իր մայրն ալ երկար ժամանակ առաջ, և թէ հայրը իր որդւոյն ուրիշ բան թողած չէր աշխարհի մէջ բայց միայն իր ջուրիկը:

Օրիորդը լուսութեամբ մտիկ կ'ընէր և իր միտքը խորհուրդներով լեցուեցաւ: Վերջապէս ըսաւ. «Իստե՛նով պզտիկ եղբայր մը ունէի, որ ինձի բոլոր աշխարհէ աւելի սիրելի էր: Հիմա գացած է, Ես միայնակ եմ, դուն ալ միայնակ ես: Պէտք է որ այն եղբորս տեղը քովս կենաս:»

Մարդիկ կ'ընէին թէ օրիորդը այդ ձմեռ աւելի թարմ և աւելի վայրուն եղաւ, թէ անիկա թէեւ երկար ատեն մինակ մնացած էր բայց գտաւ ընկեր մը որու կարօտ էր: Օրիորդը ինքն ալ այսպէս կը մտածէր, երբ երկար ատենէ ի վեր լռիկ մնացած սենեակները հնչեցին տղու մը զուարթ ձայնովը, կամ երբ իրիկունները ինք և Արչամ կրակին առջև կը նստէին և բաներ կը խորհէին ապագայ տարիներուն համար, կամ կը խօսէին Հեռաւոր երկրին մէջ իրենց սպասողներուն վրայ:

Իրիկուն մը, երբ կը խօսէին այս սիրելիներուն վրայով: Արչամ օրիորդին պատմեց փոքրիկ Բարթիկի և անոր լքուած գերեզմանին նկատմամբ: «Երանի՛ թէ կարող ըլլայի քար մը դնել անոր գերեզմանին վրայ, Օրիորդ», ըսաւ տղան: Եւ օրիորդը ձեռեցաւ և համբուրեց տղան իրիկ պատասխան: Բաւական ժամանակ յետոյ անոնք փոքրիկ շերի մը կանգնեցին, և անոր վրայ դրուեցաւ մարմարին քար մը գագաթը գեղեցիկ հրեշտակով և անոր ներքեւ սարձանագրութեամբ:

ԲԱՐԹԻԿ ՄԱՐԿՈՍԵԱՆ
ՏԱՍԸ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՆԳՁԵՑԱՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ
Տարեկան բաժանորդագրին՝ 6 դր. արծաթ կանխիկ, ամէն տեղոյ համար:
Ամերիկայի Միտչանթաք ընկերութեան կողմէն Արտօնատէր ձ. Բ. ԿՐԻՆ
Տնօրէն—Խմբագիր Հ. Ա. ՊԱՐՆԸՄ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԹ
ԳՐԱՐԱՆՈՒ ԵՒ ԵՍՏՈՐ ԳՈՅՈՒՆՆԵՐ
Ճինճանճըրը Եօզուշու, Ամերիկայի Խան